

## Դաս 7. Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհի տարածքով՝ մայրաքաղաքներ, բերդեր և ամրոցներ, եկեղեցիներ



Լրացուցիչ նյութ

### Մանթաշաբերդի կամ Աշոտ երկաթի ամրոցի հետ կապված ավանդություն

Ամրոցի և Աղսրևի կիրճում գտնվող ավերակ բաղնիքի մասին ժողովրդի մեջ մի ավանդություն է մնացել: Ասում են՝ մի գեղեցկուհի երիտասարդ իշխանուհի է եղել, որն ունեցել է իր զորքը: Շատ իշխաններ հրապուրվելով նրա գեղեցկությամբ՝ ցանկացել են ամուսնանալ, սակայն նա մերժել է բոլորին: Երբ ոչ մի կերպ չեն կարողացել համոզել, ցանկացել են ուժով փրկել: Իշխանուհին, հավաքելով իր փրկապետության փակ գտնվող մարդկանց, կառուցում է ամրոցը և իր զորքով պարսպավում այնտեղ: Աղջկա համառությունն ու քաջագործություններն ավելի են բոցավառում իշխան Մանթաշի սերը: Նա աղջկա բերդի դիմաց կառուցում է Մանթաշի բերդը և հարձակումներ գործում աղջկա բերդի վրա: Սակայն դրանք բոլորը անհաջողությամբ են վերջանում: Ավանդությունն ասում է, թե վերջապես մի անգամ աղջիկը զորքը փայխա է իր զորավարին և ուղարկում Մանթաշ բերդի վրա: Այդ կռվին թեև իշխանուհին չի մասնակցում, սակայն հաղթանակ է փանում: Դրանից հետո Մանթաշը հաշտություն է խնդրում: Նրանք պայմանավորվում են, որ յուրաքանչյուրը մնա իր ամրոցում, բայց ի նշան բարեկամության՝ Աղսրև գետի ափին (այժմյան Համամի ձալայում) կառուցում են վերը նշված բաղնիքը, որը հանդիսանում է նրանց ժամադրության վայրը:

Այդ պարճառով Աղջկա բերդին հաճախ ասում են նաև Մանթաշաբերդ: